Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 6 հունվարի 2000 թ.:

Հունվարի 5-ին, երեկոյան ժամը 5-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ճրագալույցի արարողությամբ սկսվեց Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը: Մատուցվեց Սուրբ Պատարագ: Տոնի խորհրդին հաղորդակցվելու նպատակով Մայր Տաճար էին եկել բազմահազար հավատացյալներ:

Հունվարի 6-ին, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը Սուրբ Ծննդյան իր պատգամն ուղղեց բոլոր ներկաներին և համայն հայ ժողովրդին:

«Վերստին կանգնած ենք Աստվածահայտնության հրաշքի առջև և երկուհազարերորդ անգամ ունկնդիր ենք «զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» երկնառաք մեծ ավետիսին: Քրիստոս ծնվեց, սակայն ոչ այլուր, եթե ոչ մարդկանց՝ մեր հոգիներում, Իր Ավետարանի կենարար խոսքով ազնվացնելու մարդկանց մտածումները, ուղղելու նրանց ձեռաց գործերը, ճշմարտության և բարու արժեքներով իմաստավորելու մարդկային կյանքը»:

«Արդարև, Տիրոջ 2000 թվականը դիմավորում ենք հույսով, բարի ակնկալիքներով, որոնց երաշխիքը հայրենի մեր հողում՝ Հայաստանում և Արցախում հաստատված խաղաղությունն է նաև որպես մեր ժողովրդի անցնող դժվարին տասնամյակի վաստակյալ ձեռքբերում, մեր զոհաբերությունների անուրանալի արգասիք»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր աղոթքը հղելով առ Աստված, որպեսզի անբեկանելի դառնա ձեռք բերված խաղաղությունը: Նորին Սրբությունը հորդորեց չթերանալ եղբայրասիրության մեջ, սատարել միմյանց, լինել միաբան և պահել ու շենացնել հող հայրենին՝ ժողովուրդների մեծ ընտանիքում հարատևելու հաստատուն կամքով:

Հավարտ Սուրբ Պատարագի Հայոց Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողություն, որը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում ավանդա-

բար տեղի է ունենում Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնակատարության օրը՝ իբրև Քրիստոսի Մկրտության հիշատակություն:

Սուրբ Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Արամ Սարգսյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում միջազգային, բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր:

Սրբազան Պատարագի արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցած պաշտոնական ընդունելության և հյուրասիրության ընթացքում Վեհափառ Հայրապետին Սուրբ Ծննդյան շնորհավորանքներ հայտնեցին բոլոր հրավիրյալները:

Սուրբ Պատարագի ողջ արարողությունը ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության Ազգային հեռուստատեսությամբ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ